

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10  
«Նորավանք» գիտակրթական  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի 2002 թ. հունիսի 14-ի նիստի

Նախագահում էր՝  
Ա. Մարգարյան

- ՀՀ վարչապետ

Մասնակցում էին՝

Մ. Թովուզյան

- ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար- նախարար

Տ. Սարգսյան

- ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Կ. Կիրակոսյան

- ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

Լ. Մկրտչյան

- ՀՀ արտաքին գործերի նախարարի  
տեղակալ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի  
առաջիկա գործունեության ծրագրի,  
մրցույթի անցկացման համար մշակված նոր  
հետազոտական թեմաների, Ամադու  
գյուղում հատկացված հողատարածքում  
շինարարական աշխատանքների մասին

-----  
----

(Ս. Սեյրանյան, Լ. Մկրտչյան, Կ.  
Կիրակոսյան, Մ. Թովուզյան, Տ. Սարգսյան,  
Ա. Մարգարյան)

1. Հաստատել՝

ա) «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջիկա գործունեության  
ծրագիրը:

բ) «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից հայտարարվող հետազոտական ծրագրերի  
մրցույթի թեմաները (կցվում են):

2. Ամադու գյուղում հատկացված հողատարածքի շինարարական  
աշխատանքների կատարման հարցը քննարկել առաջիկա նիստերից  
մեկում:

ՀՀ վարչապետ՝

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

### «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստի

14.06.2002թ.

1. Նիստի օրակարգի հաստատում:
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջիկա գործունեության ծրագրի հաստատում և նախատեսված ծրագրային միջոցառումների ճշգրտում:
3. Ծրագրի իրականացման ֆինանսական նախահաշվի քննարկում և հաստատում:
4. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից 2002թ. անցկացվելիք մրցութային գիտահետազոտական թեմաների քննարկում և հաստատում:
5. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Վայոց Ձորի մարզի 28,6 հա հողատարածքում վերանորոգման աշխատանքների կազմակերպման մասին:
6. Այլ հարցեր:

**«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջիկա  
գործունեության ծրագիրը և իրականացվող միջոցառումները**

*1.    Գիտակրթական գործունեություն*

1. 2001թ. «Ազգային անվտանգության հիմնադրույթներ» թեմայով մրցույթի անցկացման շրջանակներում արդյունքների ամփոփում՝ համակարգչային 50 էջ ծավալով գիտահետազոտական աշխատանքների գրավոր և բանավոր հաշվետվություն, սեմինարների և քննարկումների անցկացում, աշխատանքների հրատարակում:
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը 2002թ. իր գործունեության շրջանակներում ծրագրել է մշակել կոնկրետ և հրատապ նպատակների իրագործման համար նոր գիտահետազոտական թեմաներ, հայտարարել և անցկացնել բաց մրցույթ այդ թեմաների ներկայացման համար, նպատակ ունենալով ազգային մտավոր ներուժը ծառայեցնելու հայոց անկախ պետականության կերտման խնդիրներին:
3. Թեմատիկ պրոբլեմային կոնֆերանսների կազմակերպում և անցկացում Երևանի բուհերում:
4. Ինտենսիվ հաղորդակցման դաշտի ձևավորման նպատակով խմբագրական-ինֆորմացիոն խմբի ստեղծում:
5. «Նորավանք» գիտակրթական հաստատության նպատակներից մեկը՝ հայ մտավոր ներուժի համախմբման և ռացիոնալ օգտագործման խնդրի հաջող իրականացման տեսանկյունից կարևորվում է գիտական հասարակական հանդեսի հրապարակումը: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը 2002թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ծրագրել է իրականացնել հանդեսի հրատարակման նախապատրաստական աշխատանքները:
6. «Ազգային անվտանգության հիմնադրույթներ» թեմայով կոնֆերանսի կազմակերպում և անցկացում՝ նոյեմբեր:
7. Աջակցել «Հայաստան-Սփյուռք» խորհրդատվորդ կողմից նախաձեռնվող «Համահայկական վիրտուալ համալսարանի» ստեղծման աշխատանքներին:

## *II. Շինարարական բարեկարգման աշխատանքներ*

1. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գարեգին Նժդեհի, 23 հասցեում գտնվող Երևանյան գրասենյակի վերանորոգման նպատակով իրականացվելիք առաջնահերթ միջոցառումների իրականացում.
  - ա) առաջին և երկրորդ հարկերի վերանորոգում,
  - բ) շենքի սանհանգույցի վերանորոգում,
  - գ) տանիքի վերանորոգում,
  - դ) նկուղի, շրջակա հարող տարածքի և շենք տանող ճանապարհի բարեկարգում:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի  
կողմից հայտարարվող հետազոտական ծրագրերի մրցույթի թեմաներ

***Մրազիր.*** «Ազգային անվտանգության հիմնադրույթներ»  
(շարունակություն)

**Թեմաներ.**

1. Տնտեսական զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում,
2. Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում,

***Մրազիր.*** «Հայոց պետականությունը 21-րդ դարում.  
հիմնախնդիրներ, զարգացման  
առաջնահերթություններ»

**Թեմաներ.**

1. Ազգային և պետական գաղափարախոսություն. էություն, բովանդակություն,
2. Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները,
3. Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները,
4. Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները,
5. Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից,
6. Կոռուպցիայի հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից:

